**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«03» փետրվարի 2017թ

**Հաստատում եմ՝**
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ. Անանյան

ԳԲԽ-07/17 բողոքը քննող
հանձնաժողովին

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից 27.01.2017թ. ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումներն և պահանջը.**

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 27.01.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ 27.12.2016թ.-29.12.2016թ. ընկած ժամանակահատվածում Ընկերությունը մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով

հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-2», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-4», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-5», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-7», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-8» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին (այսուհետ նաև՝ Ընթացակարգեր):

Բողոքաբերը հայտնել է, որ վերոնշյալ Ընթացակարգերի շրջանակներում հայտերի բացումը տեղի է ունեցել 09.01.2017թ.:

29.12.2016թ.-ին ներկայացվել է երկու հայտ՝ Երևանի ժամանակով 01:20-ին (ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6) և 14:50-ին (ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-8):

Ընկերության կողմից ներկայացված բոլոր հայտերը մերժվել են գնահատող հանձնաժողովի կողմից՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու հիմքով:

Ընկերությունն հայտնել է, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվել է 29.12.2016թ.-ին («Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու և այդպիսի հիմքերի առկայության դեպքում Ընկերությանը վերոնշյալ ցուցակում ներառելու նպատակով նշանակված ՍՑ-ԳԲԽ-11/16 հանձնաժողովի նիստը կայացել է 29.12.2016թ.-ին ժամը 17:45-ին:):

Ընկերությունն, որպես բողոքի իրավական հիմք, վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի դրույթներն և խնդրել է չեղյալ համարել վերոնշյալ թվով յոթ Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված հայտերը մերժելու վերաբերյալ համապատասխան որոշումներն:

Ընկերությունն խնդրել է նաև կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել վերոնշյալ ծածկագրերով Ընթացակարգերի արդյունքներով պայմանագրեր կնքելու գործընթացը:

Որպես փաստական հանգամանքները հիմնավորող ապացույց՝ Ընկերությունն բողոքին կից ներկայացրել է հայտերի ներբեռնման պատճենները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-07/17 բողոքի քննման շրջանակներում 02.02.2017թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց բողոքով ներկայացված

դիրքորոշումը՝ հայտնելով, որ խախտվել է ՍՊԸ-ի գնման ընթացակարգին մասնակցելու օրենքով սահմանված իրավունքն՝ ներկայացված հայտերը Պատվիրատուի կողմից մերժվել են, այնինչ հայտերն ենթակա չէին մերժման, քանի որ Ընկերությունն հայտերը ներկայացնելու պահի դրությամբ ներառված չէ եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

2. **<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումներն և դիրքորոշումը.</u>**

Կենտրոնը Պատվիրատուին ուղղված 30.01.2017թ. թիվ 01/04.1/244-17 գրությամբ խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն, վերոնշյալ գրությանը ի պատասխան, 01.02.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ/1030-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 2017թ. հունվարի 11-ի թիվ 03/73-3/84-17 գրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ծանուցվել է, որ «Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 19.12.2016թ. կայացվել է թիվ ՍՑ-ԳԲԽ-11/16 որոշումը այն մասին, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 00886056/ ներառվում է Ցուցակում 29.12.2016թ.-ից՝ հաշված 6 ամիս ժամկետով: Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամանակահատվածում գնումների մրցակցային ընթացակարգերին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում հայտն անհրաժեշտ է մերժել:»:

Պատվիրատուն պարզաբանել է նաև, որ գնահատող հանձնաժողովը, չկարողանալով կողմնորոշվել ներկայացված հայտերի մերժման կամ ընդունման հարցում, բանավոր դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խորհրդատվություն ստանալու նպատակով, ընթերցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ուղարկված գրությունը և ստացել է պատասխան՝ մերժել ներկայացված հայտերը: Հետագայում, երբ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն հայտնեց իր անհամաձայնությունը ներկայացված գնային առաջարկները մերժելու վերաբերյալ, Կենտրոնից պարզաբանեցին, որ ստացված խորհրդատվությունը

սխալ է հասկացվել և մինչև դեկտեմբերի 29-ը Ընկերության հայտերը անհրաժեշտ էր ընդունել:

Պատվիրատուն նաև հայտնել է, որ ընդունում է, որ մինչև 2016թ. դեկտեմբերի 29-ը «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել են սխալմամբ և ենթակա են վերականգման: Ինչ վերաբերում է 2016թ. դեկտեմբերի 29-ին ներկայացված հայտերին, ապա այն գնահատող հանձնաժողովի կողմից չէր կարող չմերժվել:

Կենտրոնում ԳԲԽ-07/17 բողոքը քննող հանձնաժողովի 02.02.2017թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած քննարկման ժամանակ բողոքաբերի կողմից նշվեց, որ Գնումների բողոքարկման խորհրդի 29.12.2016թ. որոշումն կայացվել է ժամը 17:45-ին, այնինչ Ընկերությունը դեկտեմբերի 29-ին թվով երկու հայտերն ներկայացրել է համապատասխանաբար՝ ժամը 01:20-ին և 13:10-ին:

Բողոքաբերի վերոնշյալ պարզաբանումն ընդունվեց Պատվիրատուի ներկայացուցչի կողմից, այնուհետև Պատվիրատուի ներկայացուցիչն հայտարարեց բողոքն ամբողջությամբ ընդունելու իր դիրքորոշման մասին:

Պատվիրատուի ներկայացուցիչը խնդրեց բողոքը քննող հանձնաժողովին որոշում կայացնել հնարավորինս սեղմ ժամկետում, քանի որ դա բխում է պետության և հասարակության շահերից:

## 3. <u>ԳԲԽ-07/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲԽ-07/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտեր է ներկայացրել «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն, համապատասխանաբար՝ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1» (***28.12.2016թ.*** ժամը 12:56-ին), «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-2» (***28.12.2016թ.*** ժամը

18:44-ին), «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-4» (***27.12.2016թ.*** ժամը 12:16-ին), «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-5» (***28.12.2016թ.*** ժամը 22:25-ին), «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6» (***29.12.2016թ. ժամը 01:20-ին***), «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-7» (***28.12.2016թ.*** ժամը 13:10-ին), «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-8» (***29.12.2016թ. ժամը 13:10-ին***) ծածկագրերով:

**2.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշումների համաձայն՝ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել են՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու հիմքով:

**3.** ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ՍՑ-ԳԲԽ-11/16 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի, 29.12.2016թ. ժամը 17:45-ին կայացրած որոշմամբ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ին ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

**4.** ԳԲԽ-07/17 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի անունից, քննելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 27.01.2017թ. բողոքով ներկայացված միջնորդությունն 02.02.2017թ.-ին որոշեց բավարարել միջնորդությունը՝ Ընթացակարգերի արդյունքում պայմանագրեր կնքելու գործընթացները կասեցնել:

**5. <u>ԳԲԽ-07/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումներն և եզրահանգումը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ուսումնասիրելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից 27.01.2017թ. ներկայացված բողոքը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումն, ԳԲԽ-07/17 ծածկագրով բողոքը քննելու նպատակով 02.02.2017թ. ժամը 16:30-ին կայացաց նիստի արդյունքները և կից ներկայացված փաստաթղթերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից 27.01.2017թ. ներկայացված բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

*Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի* համաձայն՝ ***գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ <u>որոնք ներառված են</u> գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված ցուցակը հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո, գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով՝ ելնելով սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված պայմանների խախտման ծանրությունից:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 21-րդ գլուխը սահմանում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու, բողոքի արդյունքում որոշում կայացնելու կարգը և պայմանները:

Համաձայն ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի՝ ի դեմս ՍՑ-ԳԲԽ-11/16 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի, կողմից ***29.12.2016թ. ժամը 17:45-ին*** կայացված որոշման՝ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

Վերոնշյալ տեղեկատվությունը զետեղված է նաև www.gnumner.am պաշտոնական կայքում՝ համապատասխան ցանկում:

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից հայտարարված թվով յոթ Ընթացակարգերին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտեր՝ ***27.12.2016թ.*** ժամը 12:16-ին («ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-4»); ***28.12.2016թ.*** ժամը 12:56-ին («ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1»); ***28.12.2016թ.*** ժամը 13:10-ին («ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-7»); ***28.12.2016թ.*** ժամը 18:44-ին («ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-2»); ***28.12.2016թ.*** ժամը 22:25-ին («ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-5»); ***29.12.2016թ. ժամը 01:20-ին*** («ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6»); ***29.12.2016թ. ժամը 13:10-ին*** («ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-8»):

Կենտրոնն արձանագրում է, որ վերոնշյալ Ընթացակարգերին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից ներկայացված հայտերն ուղարկվել են մինչև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման ընդունումն /մինչև ***29.12.2016թ. ժամը 17:45-ը***/:

Այսպիսով, հայտերը ներկայացնելու պահի դրությամբ Ընկերությունը ներառված չէ եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և Ընթացակարգերին մասնակցելու իրավունք է ունեցել, հետևաբար վերոնշյալ հայտերը ենթակա չէին մերժման գնահատող հանձնաժողովի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուն «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժելով, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության նորմերն, ուստի առաջարկվում է ԳԲԽ-07/17 ծածկագրով բողոքը բավարարել.

- դադարեցնել «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-2», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-4», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-5», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-6», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-7», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-8» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի շրջանակներում ընդունված «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու վերաբերյալ համապատասխան որոշումները;

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝
Պետի տեղակալ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար մասնագետ,
ԳԲԽ-07/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար Լ.Սահակյան